ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունիսի 2023 թվականի N 1032-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 15-Ի N 706-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 15-ի «Բյուջեների կատարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 706-Ն որոշմամբ հաստատված բյուջեների կատարման կարգում (այսուհետ՝ կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) կարգի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«13. Գանձապետական գործառնություններին վերաբերող փաստաթղթերը ստորագրում է դրա իրավասություն ունեցող անձը՝ կազմակերպության ֆինանսական ծառայության ղեկավարի կամ գլխավոր հաշվապահի ներկայացմամբ: Նշված փաստաթղթերը՝ ստորագրման ներկայացնելու անձին լիազորելու որոշումը կայացնում

է այդ փաստաթղթերի ստորագրման իրավասություն ունեցող անձը: Առանձին ֆինանսատնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում խնդիրը կարգավորվում է «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով:

ԲԳԿ-ների, ինչպես նաև բյուջետային ծրագրերի միջոցառումներն իրականացնող պետական մարմինների գանձապետական գործառնություններին վերաբերող փաստաթղթերը թղթային կամ էլեկտրոնային եղանակով ստորագրում են՝ ԲԳԿ-ի գլխավոր քարտուղարը (աշխատակազմի ղեկավարը) կամ գլխավոր ֆինանսիստը կամ մարմնի ղեկավարի հրամանով լիազորված անձը, իսկ օտարերկրյա պետությունների և միջազգային վարկատու կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող վարկային և դրամաշնորհային ծրագրերի դեպքում՝ պետական մարմնի ղեկավարը կամ ղեկավարի հրամանով լիազորված անձը:».

2) կարգի 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«14. ԲՄԿ-ի գանձապետական գործառնություններին վերաբերող փաստաթղթերը թղթային կամ էլեկտրոնային եղանակով ստորագրում են՝ պետական մարմինների համար՝ ԲՄԿ-ի ղեկավարը կամ ղեկավարի տեղակալը կամ ղեկավարի հրամանով լիազորված անձը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնող անձը կամ նրա տեղակալը կամ մարմնի ղեկավարի հրամանով լիազորված անձը: Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից տրամադրված վարկային և դրամաշնորհային համաձայնագրերով նախատեսված միջոցների ծախսման ժամանակ այդ գործընթացը կարգավորող միջազգային պայմանագրերով և դրանց մաս հանդիսացող փաստաթղթերով սահմանված դեպքերում և կարգով ստորագրության իրավունքը պետական մարմնի կամ հիմնարկի ղեկավարը կարող է վերապահել տվյալ մարմնի կամ հիմնարկի հանրային ծառայող հանդիսացող անձանց:».

3) կարգի 38-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«38. ԲՄԿ-ների կարիքների համար կատարվող գնումների գծով ստանձնած պարտավորությունների ֆինանսավորման կարգը սահմանվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Եթե ԲԳԿ-ի կամ ԲՄԿ-ի համար տվյալ տարվա բյուջեով կամ նախահաշվով նախատեսված որևէ ծախսային ծրագրի գծով բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման գնումների հոդվածներով բյուջետային հատկացումների միայն մի մասն է նախատեսված գնումների իրականացման համար, իսկ մյուս մասն ուղղվելու է գնում չհանդիսացող ծախսերի (այսուհետ՝ ԳՉԾ) ֆինանսավորմանը, ապա այդ ծախսերի գծով հրապարակվող գնումների պլաններում՝ ԳՉԾ-ները չեն ներառվում:

38.1. Նշված կետի իմաստով՝ ԳՉԾ են համարվում բյուջեների հետևյալ ծախսատեսակները՝

1) նախորդ տարիների բյուջեների կատարման ընթացքում ստանձնած պարտավորությունների դիմաց առաջացած պարտքերի մարմանն ուղղվող ծախսերը.

2) միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման գծով ծախսերը.

3) հսկիչ գնումներով կատարվող ծախսերը.

4) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված գործարքների գծով ծախսերը.

5) կանխիկ և բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցների գծով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով հաստատված ծախսերը.

6) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարվող գնումների գծով ծախսերը:».

4) կարգի 39-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«39. ԲՄԿ-ների կողմից Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստանձնած և սույն կարգի 38-րդ կետում նշված պարտավորությունների խմբին չդասվող պարտավորությունները ֆինանսավորվում են հետևյալ կարգով՝

1) գնման ծախսեր չպարունակող պայմանագրերով ստանձնած պարտավորությունների դեպքում (բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց հատկացված դրամաշնորհների)՝ պայմանագրի շրջանակներում վճարում կատարելու համար ԲՄԿ-ն գանձապետարանի ստորաբաժանում է ներկայացնում գանձապետական վճարման հանձնարարագիր (N 4 ձև) և այդ վճարումը հիմնավորող հավաստագիր (N 5 ձև): Կանխիկ ձևով կատարվող ծախսերի դեպքում ԲՄԿ-ն գանձապետարան է ներկայացնում կանխիկ միջոցների ստացման հայտ (N 6 ձև): Գանձապետարանի ստորաբաժանումն ընդունում է ներկայացված փաստաթղթերը, եթե դրանք կազմված են սահմանված ձևերին համապատասխան: Հակառակ դեպքում, դրանք՝ ներկայացվելու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում են ԲՄԿ.

2) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց հատկացված դրամաշնորհների ֆինանսավորման դեպքում ԲՄԿ-ն գանձապետարանի ստորաբաժանում է ներկայացնում քաղվածք պայմանագրից, գանձապետական վճարման հանձնարարագիր, այդ վճարումը հիմնավորող հավաստագիր և օրենսդրությամբ սահմանված ձևին համապատասխանող հաշվարկային փաստաթղթեր (հարկային հաշիվ կամ հաշիվ վավերագիր): Եթե դրամաշնորհի հատկացումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ սահմանված կարգով, ապա վճարումը հիմնավորող հավաստագրի փոխարեն ներկայացվում է հաշվարկային փաստաթուղթ: Ընդ որում, սույն ենթակետում նշված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա տրամադրված դրամաշնորհների դիմաց վճարում կատարելու նպատակով, հաշվարկային փաստաթուղթը հաստատելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ԲՄԿ-ն գանձապետարանի ստորաբաժանում է ներկայացնում վճարման հանձնարարագիրը և օրենսդրությամբ սահմանված ձևին համապատասխանող հաշվարկային փաստաթղթերը: Գանձապետարանի ստորաբաժանումն ընդունում է ներկայացված փաստաթղթերը, եթե դրանք կազմված են սահմանված ձևերին համապատասխան: Հակառակ դեպքում, դրանք՝

ներկայացվելու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձվում են ԲՍԿ-ին.

3) այն դեպքերում, երբ Հայաստանի Հանրապետության օրենքներով պետական կառավարչական հիմնարկներին թույլատրվում է վճարովի ծառայություններ մատուցել այլ պետական կառավարչական հիմնարկներին, ապա դրանց արդյունքում առաջացած պարտավորությունները ֆինանսավորվում են հետևյալ կարգով. ԲՍԿ-ն գանձապետարանի ստորաբաժանում է ներկայացնում վճարովի ծառայություն մատուցելու վերաբերյալ երկու պետական հիմնարկների միջև ստորագրված վարչական ակտի պատճենը, ինչպես նաև N 4 ձևով սահմանված գանձապետական վճարման հանձնարարագիր՝ առանց այդ վճարումը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթերը ներկայացնելու: Գանձապետարանի ստորաբաժանումն ընդունում է ներկայացված փաստաթղթերը, եթե դրանք կազմված են սահմանված կարգին համապատասխան: Հակառակ դեպքում, դրանք ներկայացվելու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում գանձապետարանի ստորաբաժանման կողմից վերադարձվում են ԲՍԿ-ին:».

5) կարգի 56-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«56. Կանխիկ դրամով վճարումներ կարող են իրականացվել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Սոցիալական նպաստներ» կատեգորիայի մեջ ներառված հոդվածներով:».

6) կարգի 57-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«57. Բանկային վճարային քարտերով կարող են վճարումներ իրականացվել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հետևյալ տարրերով՝

1) «Աշխատանքի վարձատրություն» կատեգորիայի մեջ ներառված տնտեսագիտական հոդվածներով.

2) «Գործուղումների և շրջագայությունների ծախսեր» խմբի մեջ ներառված տնտեսագիտական հոդվածներով.

3) «Սոցիալական նպաստներ» կատեգորիայի մեջ ներառված տնտեսագիտական հոդվածներով:

Բանկային վճարային քարտերով շրջանառվող միջոցները կանխիկացման ենթակա չեն։».

7) կարգի 58-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ՝

«Կանխիկ ձևով կատարվող ծախսերի չափաքանակներ սահմանելու իրավական ակտի նախագիծը մարմնի կողմից ներկայացվում է բացառիկ դեպքերում։».

8) կարգի 62-րդ կետը «կատարվել» բառից հետո լրացնել «բացառությամբ սույն կարգի 58-րդ կետով սահմանված դեպքերի» բառերով.

9) կարգի 84-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«84. Տվյալ տարվա ընթացքում ստանձնած ֆինանսական պարտավորությունների կատարման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված փաստաթղթերը գանձապետարանն ընդունում է մինչև տվյալ տարվա նախավերջին աշխատանքային օրը ներառյալ։».

10) կարգի 85-րդ կետն ուժը կորցրած ճանաչել։

2. Կարգով հաստատված 1-8-րդ ձևերը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

23.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ